Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24962

ԴՐԱՍԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵԼ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՍՆՆԴԻ ՅԵՎ ՀԱՄԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԽՀՄ

331.881
Ա-21

ՄՈՍԿՎԱ. 1925

17 MAY 2013

15 JAN 2013

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

300
2539-կա

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՍՆՆԴԻ ՅԵՎ ՀԱՄԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՍՀՄ

ՄՈՍԿՎԱ. 1925

300
ԱԱ-ԲԵՇ

23528-60

Ընդունված է Սննդի և Համի արդյունաբերության բանվորների Միության 4-րդ համագումարում (6—12 սեպտեմբերի. 1923 թ.), վերընդունված ուղղումներով և լրացումներով 5-րդ համագումարում, 26—30 Մայիսի, 1924 թ.:

Ներկա կանոնադրությունը հաստատված և մատեանագրված է Համառուսական ՊՄԿԽ.

ՊՄԿԽ քարտուղար՝ Ա. Դոզադով
ՊՄԿԽ կազմ. բաժնի վարիչ՝ Յա. Յագլով
23 Հուլիսի 1924 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՍՆՆԴԻ ՅԵՎ ՀԱՄԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ

1. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

§1. ԽՍՀՄ Սննդի և համի արդյունաբերության բանվորների Միությունը, որպես Կարմիր Պրոֆինտերնի մարտական շարքերից մեկը և որպես նրա անդամը Համառուսական ՊԿԽՄ միջոցով, իրեն նպատակ է դնում նպաստել հեղափոխական դասակարգային կռվի զարգացման, համաշխարհային կապիտալիզմը խորտակելու և պրոլետարիատի դիկտատուրայի շնորհիվ սոցիալիզմն իրականացնելու համար:

§2. Այդ նպատակով ԽՍՀՄ Սննդի և Համի արդյունաբերության բանվորների Միությունը բացի Կարմիր Պրոֆինտերնի հետ իր ունեցած ամենամոտ կապի, անմիջական կապ և հաստատում մյուս յերկրների հարազատ արտադրական միությունների հետ, մտնում է

միջազգային համախմբման կազմը և մասնակցում է միջազգային համագումարներին և կոնֆերենցիաներին, պաշտպանելով և անցկացնելով ամենուրեք հեղափոխական դասակարգային կռվի պլատֆորման։

§ 3. Նպատակ ունենալով աշխատավորների վերջնական ազատությունը տնտեսական և մտավոր գերությունից, կրթելով և պատրաստելով իր անդամներին իրագործելու պրոլետարիատի առաջ դրված պատմական խնդիրները, ԽՍՀՄ սննդի և համի արդյունաբերության բանվորների միությունը իր գործունեությունը տանում է այս համադասակարգային խնդրին համեմատ, հպատակեցնելով դրան մասնավոր անձանց և խմբերի ժամանակավոր շահերը։

§ 4. Այս իրականացնելու համար ԽՍՀՄ սննդի և համի արդյունաբերության բանվորների միությունը գործելով անցողական պերիոդի պայմաններում և մանավանդ մասնավոր սեփականության ներկայությամբ, արտադրության գործիքների մասնավոր կապալի ներկայությամբ և պետական արդյունաբերության գործելու մեթոդների փոփոխության նկատմամբ, համախմբում է սննդի և համի արդյունաբերության բանվորների լայն խավերը, պաշտպանելու նպատակով թե նրանց դասակարգային շահերը մասնավոր կապիտալի շահագործելուց և թե նրանց նյութական և իրավային շահերը պետական ձեռնարկությանց ղեկավարների կարելի բյուրոկրատիական աղջավատումներից.

Հետևաբար ԽՍՀՄ սննդի և համի արդյունաբերության բանվորների միության գլխավոր նպատակներն են սոցիալիստական շինարարության ներկա շրջանում.—

ա. Ամեն կերպ պաշտպանել սննդի և համի արդյունաբերության բանվորների և ծառայողների տնտեսական և իրավական շահերն և բարելավել նրանց նյութական դրությունը։

բ. Բարձրացնել նրանց ընդհանուր կուլտուրական, պրոֆեսիոնալ և քաղաքական կրթության սահմանը, վորպես և նրանց պրոֆեսիոնալ գիտությունն և ունակությունը։

գ. Անցկացնել ամուր աշխատանքային դիսցիպլինան և զարգացնել բանվորների դասակարգային ինքնագիտակցությունն, յերևան հանելով բանվոր դասակարգի դերը անցողական շրջանում մասնավոր կապիտալի և պետական ձեռնարկությունների վերաբերմամբ և յերևան հանելով բանվոր դասակարգի ձգտումների ընդհանրությունը պետական արդյունաբերությունը վերականգնելու համար։

դ. Մասնակցել իր ներկայացուցիչների միջոցով խորհրդային իշխանության զանազան որգանների գործնական աշխատանքին.

ե. Մասնակցել արդյունաբերության կամակերպման և կարգավորման։

§ 5. Վերոհիշյալ նպատակներն իրագործելու համար ԽՍՀՄ սննդի և համի արդյունաբերության բանվորների միությունը.—

ա. քննում է, և կապում համամիութենական և տեղային կոլլեկտիվ պայմանագրեր թե մասնավոր և թե պետական ձեռնարկությունների և նրանց համախմբումների հետ, նաև ամեն տեսակ կազմակերպությունների և հիմնարկությունների հետ և հսկում է նրանց իրագործելուն սննդի և համի արդյունաբերության հա-

մասնատասխան բանվորների և ծառայողների խմբերի հետ։

բ. ղեկավարում է տնտեսական կովի բոլոր ձևերը, մասնակցում է կոնֆլիկտային և հաշտարարային որդաններում, իսկ կարևոր դեպքում կազմակերպում է և ղեկավարում գործադուլներ։

գ. կազմակերպում է իրավաբանական և բժշկական ոգնություն միության անդամների համար։

դ. կազմակերպում է ամեն տեսակ ֆոնդեր (փոխադարձ ոգնության, գործադուլի, կուլտուրա-լուսավորական և այլն)։

ե. մասնակցում է սննդի և համի արդյունաբերության բանվորների շահերը պաշտպանելու և դրությունը բարելավելու վերաբերյալ բոլոր որինագծերի մշակման և հսկում է աշխատանքին վերաբերյալ բոլոր որենսդրական տնորինությունների իրագործելուն։

զ, մասնակցում է բանվորների ապահովացման որդանների աշխատանքներին։

ը. իր անդամների նյութական դրությունը բարվոքելու և առողջությունը հովանավորելու նպատակով, ինքնուրույն կերպով կամ մյուս հիմնարկությունների հետ, կազմակերպում է ամեն տեսակ ձեռնարկություններ, վորոնք ծառայում են բանվորների կարիքին (հանդստի տներ, խորհրդային տնտեսություններ և այլն).

թ. միության անդամների կուլտուրական և պրոֆեսիոնալ կրթության մակերևույթը բարձրացնելու համար նպաստում է կազմակերպելու պրոֆտեխնիքական ուսումնարաններ, սկզբնական ուսումնարաններ, մանկական տներ, մանկական ապաստարաններ և այլ կուլտուրա-լուսավորական հիմնարկություններ, հրատարակում է թերթեր, լրագրներ և այլն։

ժ. մասնակցում է հիմնական և պլանավոր տնտեսական միջոցներ մշակելուն սննդի և համի արդյունաբերության պետական և հասարակական ձեռնարկությունների համար, քննելով այն միջոցները տնտեսական որդանների հետ միասին և նաև հսկում է նրանց կանոնավոր իրագործման։ Հանձնարարում է և քննում սննդի և համի արդյունաբերության վարիչ և տնորինող որդանների համար կանդիդատներին։

II ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ.

§ 6. ԽՍՀՄ սննդի և համի արդյունաբերության բանվորների միության կազմը մտնում են բոլոր բանվորներն և ծառայողները, վորոնք հպատակվում են ներկա կանոնադրության և աշխատում են հետևյալ արտադրական ձեռնարկությունների մեջ—

Ալյուր աղացող—կրուպայի, մակարոնի, հացթուխի, դալետի, սուխարի, կոնդիտերային (կարամելի, կոնֆետի, շոկոլադի, մարմելադի, պաստիլայի, պիրոժնու, բիսկվիտի, պրյանիկի, վաֆլու, հալվայի) կրախմալ-պատոկայի (կարտոֆել-ջարդելու, կրախմալ-չորացնելու, սագայի, պամոկայի, գլյուկոզայի, դեկստրինի) ձեթ քաշելու, ձավարի, յուղագործության, պանրագործության, սպանդանոցի, ճարպահալոցի, արյուն չորացնելու, միս աղ դնելու, եկստրոլի, յերիկամունքների, կալբասի, մսի կոնսերվա, միս ծխելու, ձուկ աղ դնելու և քամհարելու, (ձկնորսության) ձուկ ծխելու, ձուկ կոնսերվի, կանաչեղեն և միրգ չորացնելու, կանաչեղեն և մրգեղեն կոնսերվի, ձու և կաթնեղեն կոն-

սերվի, գարեջրի, արհեստական հանքային ջրերի, կըվասի, հացից պատրաստած ջրերի և խմիչքների, դրոժի, ողի քաշելու, գինեգործության, քացախի, լիքյորի, կոնյակի, վոդկից խմիչքների, մանանեխի, թռչնաձույերի, պաղանոցի, սննդի արդյունքների գործադրության, կաղամբ և ուրիշ կանաչեղեններ թթվեցնելու, թեյի, սրճի, ցիկորու և սրանց սուրրոգատների, թամբաքուի, մախորկայի, գիլզաների և սիգարի։

Նկատողություն I.—Միության որգաններիի աշխատակիցները (գործկոմները, բաժանմունքները, բաժինները, կենտր. կոմիտեն) մտնում են սննդի և համի արդյունաբերության բանվորների միությունը։

Նկատողություն II.—Ներկա հիշած արտադրության ոժանդակիչ ձեռնարկությունների բանվորները նույնպես մտնում են սննդի և համի արդյունաբերության բանվորների միությունը։

Նկատողություն III.—Սննդի և համի արտադրության բանվորների միություն են մտնում նաև սննդի և համի արդյունաբերության վարիչ և տնորինող որգանների աշխատակիցները և արտադրիչ ձեռնարկության հետ անմիջապես կապված խանութների ծառայողները։

§ 7. Այն անձինք, վորոնք սպասավորում են վոչ թե ինքը արտադրությունն, այլ արտադրիչ ներին, նույնպես և ձեռնարկությունների մեջ ժամանակավորապես մասնավոր աշխատանք կատարողները, չեն կարող անդամ լինել սննդի և համի արդյունաբերության բանվորների միության, այլ մնում են իրենց

արտադրական միությունների անդամ։

§ 8. Ազգայնությունը, սեռը, հասակը, կրոնական և քաղաքական համոզմունքները վոչ մի պայմանով չեն կարող արգելք հանդիսանալ սննդի և համի արդյունաբերության բանվորների միության անդամ դառնալուն։

§ 9. Միության անդամ չեն կարող լինել—

ա. ով իրավունք ունի վարձելու և արձակելու մասնավոր և կոպերատիվային ձեռնարկություններում։

բ. կուլաքներ, կոմմունայի արտադրական կոոպերատիվների, աշխատավոր ընկերությունների անդամներ, նաև թաք կուլաքներ և արտելների անդամներ, անկախ նրանից՝ ոգտվում են թե վոչ վարձու աշխատանքով։

գ. ով բոլորովին կորցրել է աշխատանքի ընդունակությունը և անգործներից նրանք, վորոնք միության անդամ չեն յեղել աշխատանքի բիրժայում գըրվելուց առաջ։

Նկատողություն I.—Պետական ձեռնարկություններում վարչական պաշտոններ ունեցող անձինք միության անդամ են դառնում, բացի նրանցից, վորոնց մերժելու համար հատուկ տնորինություն կըկայանա միության համապատասխան որգաններից։

Նկատողություն II.—Հասարակական և կոպերատիվային ձեռնարկությանց վարչական պերսոնալը կարող են միություն մտնել, յեթե ամեն մի անձի վերաբերմամբ միության որգանի համապատասխան տնորինություն կըկայանա։

Նկատողություն III.—Միության անգործ

մնացած կամ ժամանակավորապես աշխատանքի ընդունակություն կորցրած անդամները շարունակում են միության անդամ մնալ այդ բանից առաջացող բոլոր հետևանքներով, և այդ ժամանակամիջոցում նրանք ազատվում են անդամավճարից, սակայն թե միության մեջ և թե համապատասխան հիմնարկության մեջ (աշխատանքի բիրժայում, ապահովության կասսայում) ժամանակին ցուցակագրվելու դեպքում։

§ 10. Ուրիշ արտադրական միությունների անդամները, վորոնք անցելին սննդի և համի արդյունաբերության ձեռնարկություններին, միություն են մտնում հին անդամների իրավունքով, առանց ներածական վճարի, պահպանելով իրանց պրոֆեսիոնալ ստաժը, սակայն անպատճառ տեղեկացնելով իրենց դուրս գալու մասին այն միության, վորտեղ նրանք անդամ եյին նախ քան կ՚անցնեյին այն ձեռնարկությունը, վոր համախմբում է ԽՍՀՄ սննդի և համի արդյունաբերության բանվորների միությունը։

Նկատողություն.—արգելվում է միաժամանակ ուրիշ վորևե արտադրական միության անդամ լինել։

§ 11. Միություն մտնելը կատարվում է անհատականապես աշխատավորի հոժար կամքով։

§ 12. Միության մեջ գրվելը կատարվում է գործկոմին կամ անմիջապես վարչության ուղղած հայտարարության միջոցով և ներածական վճար մտցնելով։

§ 13. Միության անդամները, վորոնք ուղարկվում են զանազան հիմնարկություններ և կազմակերպություններ, վորպես ներկայացուցիչներ, վորոշ աշխատանք կատարելու համար, միության անդամ են մնում բոլոր ժամանակ քանի պահպանումեն իրենց լիազորությունները։

§ 14. Զինվորական, կուսակցական, պրոֆեսիոնալ, Կարմիր զորքի շարքերը զինակոչ յեղածները միության անդամ են մնում ամբողջ ժամանակ, քանի տևում է զինակոչը և ազատվում են անդամավճարներից։

§ 15. Միության անդամները, վորոնք բաբֆակ, պրոֆուսումնարան, պրոֆտեխնիքական կրթության վարժարան են ուղարկվում, միության անդամ են մնում ամբողջ ժամանակ, քանի վոր այնտեղ են գտնվում։ Վերջինները անդամավճար են տալիս միութենական որգանների մշակած առանձին կանոնադրության հիման վրա։

III ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

§ 16. Միության բոլոր անդամները, վորոնք հասած են 16 տարիքին՝ ոժտվում են ակտիվ ընտրողական իրավունքով (ընտրելու իրավունքով) միութենական գործունեության վերաբերյալ բոլոր հարցերում, իսկ նրանք վորոնք հասած են 18 տարիքին—նաև պասսիվ իրավունքով (ընտրվելու իրավունքով)։

§ 17. Միության ամեն մի անդամ պարտավոր է ճշտությամբ և իրա ժամանակ վճարել անդամավճարները, հպատակվել միության պրոլետարական դիսցիպլինային, կատարել կոլլեկտիվ պայմանագրների բոլոր կետերը, հնազանդել միութենական կյանքի վերաբերյալ բոլոր հարցերի նկատմամբ միության որգաններից ծագող պահանջներին։

IV ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ։

§ 18. *Միության անդամները, վորոնք խախտում են կանոնագրությունը և չեն կատարում միության որդանների վճիռները, չեն հպատակվում միության պրոլետարական դիսցիպլինային, նաև քրեական հանցանքների և ուրիշ անվայել վարմունքների համար դատապարտվածները, զրկվում են միության անդամությունից, այդտեղից առաջ յեկող բոլոր հետևանքներով։*

Նկատողություն.—անդամությունից զրկումն կարող է լինել ժամանակավոր և մշտական։ Անդամի զրկման ժամանակամիջոցը վորոշվում է, ամեն մի առանձին դեպքում, գործած պարտազանցության համեմատ։

§ 19. *Միության անդամությունից զրկման վճիռը վերոհիշյալ հանցանքների և պարտազանցությունների շնորհիվ՝ կայացնում են գավառական, նահանգական բաժինների և Կենտր. Կոմիտեի ղեկավարող որդանները։*

Նկատողություն.—Շահագրգռված անձինք կարող են բողոք տալ զրկման վճռի դեմ բարձրագույն միության որդաններին։

§ 20. *Միությունից ինքնաբերաբար դուրս են գալիս.*

ա. ուրիշ միության համախմբած ձեռնարկություններ անցածները։

բ. աշխատանքի ընդունակություն բորբոքվին կորցրածները, սոցիալական ապահովության կամ վորևե մեկի հաշվին ապրելու անցած միջոցից։

գ. առանց հարգելի պատճառների 3 ամիս շարունակ անդամավճար չվճարողները։

Նկատողություն.—պատճառների հարգելիությունը վճռում է տեղական միության կազմակերպությունը

§ 21. *Միությունից անդամավճար չվճարելու պատճառով դուրս յեկածները կարող են նորից անդամ ընդունվել միայն ներքածական վճար մտցնելուց հետո։*

V ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ.

ա. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ.

§ 22. *ԽՍՀՄ ննդի և համի արդյունաբերության բանվորների միության բարձրագույն որդան համարվում է Միության Համագումարը, վոր կայանում է վոչ սակավ քան յերկու տարի մի անգամ։*

Նկատողություն.—Արտակարգ Համագումարը գումարվում է Կենտրոնական Կոմիտեյի պլենումի վճռով, Վերաքննիչ Հանձնաժողովի պահանջով, Համառուսական ՊՄԿԽ, նաև նահանգական բաժնի պահանջով, վորոնք ունեն վոչ պակաս քան 1/3 մասը ԽՍՀՄ ննդի և համի արդյունաբերության բանվորների Միության անդամների ընդհանուր թվի։

§ 23. *Համամիութենական համագումարը գումարվում է նահանգական բաժինների ներկայացուցիչներից, վորոնք ընտրվում են նահանգական ժողովներին հետևյալ նորմայով. 300—1000 միության անդամներից—մեկ դելեգատ, 1000-ից վեր—ամեն մի հազարից մեկ դելեգատ։*

Գավառական (շրջանային) բաժինները, վորոնք

500-ից ավելի անդամ ունեն Համամիութենական Համագումարի համար ընտրություն են կատարում գավառական (շրջանային) ժողովներին. գավառական բաժինների ներկայացուցիչները նահանգական ժողովներին չեն մասնակցում նահանգական բաժինների դելեգատների ընտրությանը։ Այն բաժինների ներկայացուցիչների թիվը, որոնք ինքնուրույն կերպով են ընտրություն կատարում Համամիութենական Համագումարին, հաշվի չի առնվում նահանգական ժողովի դելեգատներ ընտրելիս։

Նկատողություն.— Կենտր, Կոմ., Վերաքննիչ հանձնաժողովի անդամները և կանդիդատները համագումարին խորհրդակցական ձայն ունեն.

§ 24. Համամիութենական Համագումարը—

ա. Ունկնդրում է Կենդրոնական Կոմիտեյի և Վերաքննիչ Հանձնաժողովի գործունեության հաշվետվությունը, վորոշում է նրանց հետագա գործունեության ընդհանուր բնույթը և հաստատում է Միության կազմակերպչական սկզբունքները.

բ. Կշռադատում է և վճռում միության աշխատանքի զանազան բաժանմունքներին վերաբերյալ հարցերը։

գ. Ունկնդրում է տնտեսական որգանների հաշվետվությունը և սկզբունքային ցուցմունքներ է տալիս արդյունաբերական կազմակերպության։

դ. Ընտրում է դելեգատներ զանազան համագումարներին։

ե. Ընտրում է Կենտրոնական Կոմիտե և Վերաքննիչ Հանձնաժողով։

Բ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ.

§ 25. Կենդրոնական Կոմիտեյի կարգադրությամբ երկու ժողովների միջանցքում կարելի է գումարել համամիութենական կոնֆերենցիա Կ. Կ.-ի վորոշած նորմայով։

§ 26. Համամիութենական կոնֆերենցիան—

ա. Ունկնդրում է Կ.Կ.-ի և տնտեսական որգանների հաշվետվությունը սկսած վերջին համագումարից կամ կոնֆերենցիայից։

բ. Նիշում է մոտակա ուղի և միջոցներ Կ.Կ.-ի և տնտեսական որգանների գործունեության համար։

գ. Կ. Կ.-ի և Վերաքննիչ Հանձնաժողովի պակաս անդամների ընտրություն և կատարում, կանդիդատների դուրս գալու դեպքում։

§ 27. Կոնֆերենցիան Միության Խորհրդատու որգանն է և նրա վճիռները Կ.Կ.-ի համար պարտադիր են լոկ այն դեպքում, յերբ նրանք չեն հակասում Համամիութենական Համագումարի վճիռներին և կարգադրություններին։

Գ. ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ.

§ 28. Համամիութենական ծավալով աշխատանք կատարելու համար համագումարի ընդունած վճիռների և կարգադրությունների հիման վրա ընտրվում է Կենդրոնական Կոմիտե, թվով 35 և 15 կանդիդատներ։ Կենդր. Կոմիտեն Միության Գերագույն ղեկավարող որգանն է և նրա համագումարների միջանկյալ պերիոդներում,

§ 29. Կենդր. Կոմ. իր գործունեության համար

պատասխանատու է Համամիութենական համագումարի առաջ։

§ 30. Կենդրոնական Կոմիտեյի պլենումը հավաքվում է վոչ պակաս քան ամեն չորս ամիս մի անգամ։

§ 31. Կենդրոնական Կոմիտեյի պլենումը—

ա. ընտրում է պրեզիդիում.

բ. ունկնդրում է պրեզիդիումի գործունեության հաշվետվությունը և նիշում է հետագա գործունեության ծրագիրը.

գ. ունկնդրում է տնտես որգանների և նրանց մեջ գտնվող իր ներկայացուցիչների զեկուցումներն և համապատասխան վճիռներ է կայացնում.

ե. քննում է ժողովին և նրա որգաններին վերաբերյալ խնդիրների և աշխատանքի հարցերը։

Նկատողություն.—Վերաքննիչ հանձնաժողովի անդամներն և կանդիդատներն խորհրդատու ձայն ունեն Կ. Կ-ի պլենումին։ Կ. Կ-ի անդամության կանդիդատները նմանապես խորհրդատու ձայն ունեն պլենումի նիստին, իսկ Կ. Կ-ի անդամների բացակայության ժամանակ՝ վճռական ձայն ունեն։

§ 32. Կենդր. Կոմ-ի անդամների դուրս գալու դեպքում կանդիդատները հերթով, համագումարի ժամանակ ստացած ձայների համեմատ, անդամ են դառնում։

դ. ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՊՐԵԶԻԴԻՈՒՄ.

§ 33. Պրեզիդիումը Կենդր. կոմ-ի գործադիր որգանն է։

ա. վարում է, համամիութենական համագումարի, կոնֆերենցիայի և Կ. Կ-ի պլենումի տնորինությունների հիման վրա, ամբողջ առորյա աշխատանքը

բ. ղեկավարում է և ուղղություն տալիս միության բոլոր տեղական կազմակերպությունների և Կենդր. Կոմ-ի ապպարատի աշխատանքին.

գ. հսկում է իր ներկայացուցիչների գործունեությունը և ղեկավարում նրա գործնական աշխատանքը.

դ. Հետևում է սննդի և համի արդյունաբերության մեջ աշխատանքի դրության և ընթացքին և մասնակցում է տնտես որգանների կազմակերպվելուն։

ե. հաշվի է առնում ակտիվ պրոֆգործիչներին և կազմակերպիչ ուժերը բաժանում է միության գործունեության բոլոր շրջաններում։

զ. Կենդր. Կոմ-ի կողմից ներկայացնում է բոլոր տնտեսական, պետական և ուրիշ որգաններում.

ե. լուծում է տեղում ծագող ընդհարումները և գործադուլի հարցերը, վորոնում է Միության անդամների նյութական և իրավական դրության բարելավման ձևերն և միջոցները, կապում է կոլեկտիվ պայմանագրեր։

ը. բաժանում է գործադուլի ֆոնդերը։

թ. ստանում և նահանգական բաժիններից Կ. Կ-ին հասանելիք տոկոսներն և վարում է բոլոր ֆինանսական ոպերացիաներ.

Ե. ՐԱՅՈՆԱՅՐԱԾ ՇՐՋԱՆՆԵՐ, ՇՐՋԱՆԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐ ՅԵՎ ԼԻԱԶՈՐՆԵՐ։

§ 33. ա. Միության որգանների կազմակերպումը բայոնայցրած շրջաններում վորոշում է Կենդր. Կոմ-ի պլենումը.

§ 34. Առանձին բայոններում, վորտեղ կա սննդի և համի արդյունաբերություն, բազմաթիվ անդամների

1003
19690

ներկայության դեպքում, կազմակերպվում են Կ. Կ-ի Ներկայացուցչություններ (բյուրո կամ լիազոր) տեղական նահանգական բաժինների աշխատանքը ղեկավարելու, և կարգի դնելու, Կ. Կ-ի հետ կապ ամրացնելու, նաև վարչական և տնտեսական որգաններում, ներկայացուցիչ ունենալու նպատակով։

§ 35. Բյուրոյի կամ լիազորի անհրաժեշտությունը վորոշում է Կ. Կոմ. առանձնապես ամեն մի դեպքում։

§ 36. Բյուրոյի արդամներն ընտրվում են շրջանային կոնֆերենցիայում և հաստատվում են Կ.Կ.-ից. լիազորին նշանակում է Կ. Կոմ։

§ 37. Շրջանային կոնֆերենցիաների գումարման կարգը, նրանց իրավունքներն և պարտականությունները նույնպես և բյուրոյի մանրամասն կազմակերպման և լիազորի աշխատանքը վորոշվում է Կ. Կ.-ի մշակած հատուկ կանոնագրությամբ։

Զ. ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ա. Նահանգական Համագումար.

§ 38. ԽՍՀՄ սննդի և համի արդյունաբերության բանվորների միությունը բաժանվում է նահանգական բաժինների, վորոնք ղեկավարում են միության գործունեությունը նահանգում։

§ 39. Նահանգի գերագույն միութենական որգանը Նահանգական Համագումարն է, վոր գումարվում է վոչ սակավ քան տարին մեկ անգամ։

Նկատողություն.—արտակարգ համագումարները գումարվում են Կ. Կ.-ի, նահանգական պրոֆխորհրդի, նահանգական բաժնի վարչության

Վերաքննիչ Հանձնաժողովի, Դավառական բաժնի կամ ֆաբգործկոմի տնորինությամբ, վորոնք համախմբում են ներկա նահանգական բաժնի անդամների վոչ պակաս քան 1/3 մասը։

§ 40. Նահանգական համագումարների ընտրությունները կատարվում են ձեռնարկությունների մեջ հետևյալ նորմայով. նահանգական բաժիններ, վորոնք ունեն միության անդամներ—

մինչև 200 մարդ, ընտրում են պատգամավոր—մեկ ներկայացուցչի՝ ամեն մի 5 մարդուց։

200-ից	մինչև	500	„	10	„
500-ից	„	1000	„	15	„
1000-ից	„	3000	„	25	„
3000-ից	„	7000	„	50	„
7000-ից	„	10000	„	75	„
10000-ից	վեր		„	100	„

Նկատողություն I.—3/4-ը պետք է հաշվել վորպես ամբողջ նորմա. որ. 75 իբրև 100, 38 իբրև 50. և այլն։

Նկատողություն II.—Մանր նահանգական բաժիններում, վորտեղ բանվորների թիվը հասնում է 500, յեթե տեխնիկական տեսակետից անհնար է, փոխանակ համագումարի գումարվում է բանվորների ընդհանուր ժողով, վորը վայելում է համագումարի բոլոր իրավունքները։

§ 41. Նահանգական բաժնի վարչության վերաքննիչ հանձնաժողովի անդամներն և կանդիդատները, վորոնք ընտրված չեն նահանգական համագումարի դելեգատներ, ժողովին խորհրդատու ձայն ունեն։

§ 42. Նահանգական համագումարը—

23528-60

ա. ունկնդրում է և հաստատում է նահանգական բաժնի վարչության վերաքննիչ հանձնաժողովի և նահանգական բաժնի զանազան հիմնարկությունների մեջ ներկայացուցիչների գործունեության հաշվետվությունը։

բ. նիշում է հետագա աշխատանքի ծրագիրն և այն միջոցների իրագործումը, որ տալիս են բարձրագույն միութենական որգանները.

գ. քննում է պրոֆկյանքի հերթական հարցերը.

դ. քննում է համամիութենական համագումարի և կոնֆերենցիայի որակարգը.

ե. ունկնդրում է տնտեսորգանների զեկուցումներն և համապատասխան վճիռներ է կայացնում.

զ. ընտրում է ներկայացուցիչներ համագումարներին.

ը. ընտրում է նահանգական բաժնի վարչություն և վերաքննիչ հանձնաժողով։

§ 43. Նահանգական համագումարի տնորինությունները կարող է բեկել Կենդր. Կոմ. յեթե նրանք հակասում են միութենական գերագույն որգանների կանոնադրության և տնորինություններին։

Բ. ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ.

§ 44. Ժողովների միջանկյալ պերիոդում նահանգական բաժնի վարչությունը կարող է հրավիրել Նահանգական կոնֆերենցիաներ իր հաստատած նորմայով և կարգով.

§ 45. Հարկավոր յեղած դեպքերում նահանգական բաժինը կարող է հրավիրել գործարանային կոմիտիներ, (ընդհանուր և սեկցիաների) քաղաքային կոնֆերենցիաներ, իր հաստատած նորմաներով, գործնական հարցեր վճռելու համար։

§ 46. Թե քաղաքային և թե նահանգական կոնֆերենցիաների աշխատանքը ըստ եությունի խորհրդատու բնույթ է կրում, և նրանց տնորինությունները պարտադիր են վարչության համար միմիայն այն դեպքում, յեթե նրանք չեն հակասում նահանգական համագումարների վճիռներին վորպես և Կ. Կ.-ի տնորինություններին։

§ 47. Կոնֆերենցիան իրավունք ունի լրացուցիչ ընտրություններ կայացնելու անդամների դուրս գալու դեպքում.

ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ.

§ 48. Նահանգակոն ծավալով միութենական աշխատանքը վարելու համար նահանգական համագումարն ընտրում է նահանգական բաժնի վարչություն վոչ պակաս քան 5 մարդուց։ Վարչությունն ընտրվում է 4 տարով։ Կենդր. Կոմիտեն իրավունք ունի ժխտելու վարչության այս կամ այն անդամի ընտրությունը։

§ 49. Համագումարների միջանկյալ պերիոդում նահանգական բաժնի վարչությունը նահանգի գերագույն միության որգանն է, վոր ղեկավարում է և ուղղություն է տալիս միության բջիջների աշխատանքին, նահանգական համագումարի վճիռների համեմատ և միութենական ընդհանուր գերագույն որգանների դիրեկտիվների համաձայն։

§ 50. Իր գործունեության մեջ վարչությունը պատասխանատու յե նահանգական համագումարի և Կենդր. Կոմիտեյի առաջ։

§ 51. Նահանգական բաժնի վարչությունը հրավիրվում է ժողովի վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ։ Բացի սովորականից, կարող են հրավիրվել նաև վարչության ընդարձակած նիստեր, բաժինների և ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցությամբ. վերջինները պլենումի ժամանակ խորհրդատու ձայն ունեն։

§ 52. Նահանգական բաժնի վարչությունը մշակում է միության կյանքին վերաբերյալ ամենակարևոր միջոցներ նահանգական ծավալով և ուղղություն է տալիս գործադիր որգանի աշխատանքին, այսինքն՝ վարչության պրեզիդիումին, վոր ընտրում է իր միջից թվով 3—5 մարդուց։

§ 53. Վարչության պրեզիդիումը վարում է Միության ամբողջ առորյա աշխատանքը նահանգում։

ա. իրագործում է վարչության, համագումարների և կենդր. Կոմիտեյի բոլոր անորինությունները։

բ. ղեկավարում է միութենական ստորին որգանների աշխատանքը, պարբերաբար շրջելով և տեղեկացնելով, հաճախելով կոնֆերենցիաներն և ընդհանուր ժողովները։

գ. լուծում է տեղերում ծագած բոլոր ընդհարումներն և ղեկավարում է ծագող գործադուլները։

դ. նպաստում է իր անդամների կենցաղի և աշխատանքի պայմանների բարելավման։

ե. հրավիրում է տեղական ներկայացուցիչների խորհրդակցություններ, տեղական բնույթ կրող հարցեր վճռելու նպատակով և համապատասխան միջոցներ մշակելու համար.

զ. ղեկավարում է միութենական աշխատանքի

բոլոր մասերը.

է. կազմակերպում է ամեն տեսակ ֆոնդեր (գործադուլի, կուլտուրական, փոխադարձ ոգնության ևն).

ը. քննում է և առաջ քաշում տնտեսական պաշտոնների կանդիդատներին պետական ձեռնարկությունների և հիմնարկությունների մեջ.

թ. մասնակցում է փոխադարձ ոգնության կասսաների, ապահովության կասսաների, կոոպերացիայի և այլ կազմակերպության աշխատանքներին..

ժ. նահանգական բաժնի անունից վորպես նրա ներկայացուցիչ է հանդիսանում զանազան հիմնարկությունների և կազմակերպություններում հետ ունեցած հարաբերությունների մեջ.

ի. միության անունից կոլլեկտիվ պայմանագրեր է կապում.

լ. հաշիվ է պահում և վերաբաժնում պրոֆդորձիչներին։

խ. ճշգրիտ և պարբերական տեղեկություններ է տալիս Միության բարձր որգաններին թե նահանգական բաժնի և թե տեղերի աշխատանքի դրության մասին։

ծ, իրա ժամանակ վորոշած կարգով ստանում է Միության անդամներից անդամավճարներ և ուղարկում է Կենդր. Կոմիտեյին և նահանգական պրոֆխորհրդին հասանելիք տոկոսները։

կ. վորոշյալ միջոցներին հրավիրում է վարչության։

դ. ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ

§ 54. Նահանգական բաժնի գործունեության բայոնը

տարածվում է Միության բոլոր գավառական (վիճակային) կազմակերպութիւնների վրա, որոնցից 150-ից վոչ պակաս անդամ ունեցողները կազմում են գավառական (վիճակային) բաժին։

§ 55. Բաժանմունքի վարչությունը ընտրվում է վոչ պակաս քան 5 մարդուց մի տարի ժամանակով գավառական (վիճակային) ժողովին, վոր բաղկանում է ներկա գավառի (վիճակի) ձեռնարկութիւնների ներկայացուցիչներից նահանգական բաժնի հաստատած նորմայով. (§ 40) նահանգական բաժնի վարչությունը իրավունք ունի հարկ յեղած դեպքում ժխտելու բաժանմունքների վարչության անդամների ընտրությունը։

Նկատողություն—այնտեղ, վորտեղ տեխնիքական կողմից հնարավորություն կա, գավառական կոնֆերենցիաները փոխարինվում են Միության բոլոր անդամների ընդհանուր ժողովով, վորը կոնֆերենցիայի բոլոր իրավունքներն ունի.

Նկատողություն II—վարչության վերընտրությունը կարելի է կատարել և ժամանակից առաջ. նահանգական բաժնի և գավառական պրոֆբյուրոյի պահանջով և նահանգական բաժնի համաձայնությամբ, վերաքննիչ հանձնաժողովի կամ անդամների 1/3 մասի պահանջով։

§ 56. Բաժանմունքի վարչությունը նահանգական բաժնի որդանն է. գավառում աշխատանք է վարում նահանգական բաժնի, գավառական կոնֆերերցիայի և միության բարձր որդանների դիրեկտիվների հիման վրա և իր գործունեության համար պատասխանատու է գավառական կոնֆերենցիայի, նահանգական բաժնի և կենդր. կոմ.-ի առաջ։

§ 57. Գավառական համագումարը հավաքվում է վոչ սակավ քան 6 ամիսը մի անդամ։

ա. ունկնդրում է վարչության գործունեության զեկուցումն.

բ. Տալիս է համապատասխան ուղղություն նրա հետագա գործունեության.

գ. Քննում է գործունեության միջոցին ծագող բոլոր հարցերը և համապատասխան միջոցներ է նիշում։

դ. Ընտրում է բաժանմունքի վարչություն և վերաքննիչ հանձնաժողով.

§ 58. Բաժնի վարչությունը—

ա. զեկավարում է և ուղղություն տալիս ֆաբրիկա—գործարանային կոմիտեների աշխատանքին։

բ. գումարում է ձեռնարկութիւնների ներկայացուցիչների խորհրդակցություն և նպաստում է բանվորների ընդհանուր ժողովներին։

գ. լուծում է տեղերում ծագող ընդհարումներն և զեկավարում է ծագող գործադուլները։

դ. կապում է կոլլեկտիվ պայմանագրներ։

ե. զեկավարում է միութենական աշխատանքի բոլոր մասերը։

զ. առաջարկում է և քննում պետական ձեռնարկությունների և հիմնարկությունների տնտեսական պաշտոնների համար կանդիդատներին։

ը. ներկայացուցիչ է հանդիսանում միության անունից բոլոր տնտեսական, հասարակական և պետական կազմակերպություններում։

թ. պարբերական տեղեկագրներ և զեկուցումներ է տալիս իր գործունեության մասին միութենական գերագույն որդաններին։

ժ. ստանում է միության անդամներից անդամավճարներ։

ի. ստեղծում է ֆոնդեր (գործադուլի, կուլտուրական և այլն)։

լ. կազմակերպում է փոխադարձ ոգնության կասսաներ և նպաստում է կազմակերպելու ապահովության կասսաներ, կոոպերատիվներ և այլն։

§ 59. Առորյա աշխատանքը վարելու համար բաժանմունքի վարչությունը ընտրում է իր միջից նախագահ և քարտուղար և կամ պրեզիդիում, նայած վարչության անդամների թվին։

ՐԱՅՖԱԲԳՈՐԾԿՈՄ-ՆԵՐ

§ 60. Գավառներում, ուր սննդի և համի արդյունաբերությունը թույլ է զարգացած և Միության անդամների թիվը 150-ից պակաս է, կազմակերպվում են բայֆաբգործկոմներ։

§ 61. Բայֆաբգործկոմները կարող են նահանգական բաժնի ենթակայությամբ գոյություն ունենալ գավառական բաժանմունքի իրավունքներով այն դեպքում երբ նրանք փոխարինում են գավբաժինները։

§ 62. Բայֆաբգործկոմի հետզհետե ուժեղանալու և անդամների թիվը ավելանալու դեպքում, բայֆաբգործկոմը կարող է փոխվել բաժնի, վորի համար հարկավոր է նահանգական բաժնի ենթակայությունը։

§ 63. Բայֆաբգործկոմի աշխատանքին և նրանց մեջ միությունական հարաբերություններին վերաբերյալ ինստրուկցիան մշակում է Կենդր. Կոմիտեն։

Զ. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐ

§ 64. Սննդի և համի արդյունաբերության տարբեր

ճյուղերի բանվորների պայմաններն և աշխատանքի սպեցիֆիկ առանձնահատկություններն ուսումնասիրելու և սպասավորելու նպատակով, բաժանմունքներին, նահանգական բաժիններին և Կենդր. Կոմիտեին կից կարող են ստեղծվել արտադրական սեկցիաներ։

§ 65. Սեկցիայի նպատակն է ուսումնասիրել ներկա արտադրության բանվորների կենցաղի և աշխատանքի առանձնահատկությունները կոլլեկտիվ պայմաններ կապելիս, սեկցիայի անդամներին վերաբերյալ նյութերի ընտրություն անել, սեկցիայի անդամներին վերաբերյալ հարցեր բարձրացնել Միության որգաններում քննելու համար և սեկցիայի անդամների սպեցիֆիկ շահերը սպասավորել։

§ 66. Սեկցիայի գործնական աշխատանքի համար, համապատասխան միության որգանների թույլատվությամբ գումարված համագումարներին ընտրվում է բյուրո՝ գավառական բաժիններին, նահանգական բաժիններին և Կեդրոնական Կոմիտեին կից։

§ 67. Սեկցիայի բոլոր ենթակայությունները հաստատվում են համապատասխան Միության որգաններից։

§ 68. Սեկցիան իր աշխատանքը կատարում է Միության ընդհանուր ապպարատի միջոցով և գործ է ածում համամիութենական կնիքը։

§ 69. Սեկցիաների նորմալ կանոնադրությունը մշակում է Կենդր. Կոմիտեն։

§ 70. Բացի արտադրական սեկցիաներից նահանգական բաժիններին և Կենդր. Կոմիտեին կից, կարող են կազմվել գիտական-տեխնիքական ուժերի սեկցիա (ինժեներների, տեխնիկների) վորոնք գործում են Կենդր. Կոմիտեի մշակած հատուկ կանոնադրության հիման վրա։

Բ. ՖԱԲՐԻԿԱ-ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ (ՏԵՂԿՈՄ՝-ԵՐԱՐՏԿՈՄ՝-ԵՐ)

1. Ընդհանուր մասն.

§ 71. Միության սկզբնական բջիջը տեղերում ֆաբ-գործկոմն է, որ կազմակերպվում է բոլոր պետական, մասնավոր և այլն սննդի և համի արդյունաբերության ձեռնարկությունների մեջ, որտեղ վոչ պակաս քան 50 բանվոր կա.

Նկատողություն. — Ձկնորսության մեջ կարող է լինել միայն մի ֆաբրիկա-գործարանային կոմիտե։

§ 72. Այն ձեռնարկություններում և հիմնարկություններում որտեղ անդամների թիվը չի հասնում վերոհիշյալ նորմային, փոխանակ Ֆաբրիկա-գործարանային կոմիտեյի ընտրվում է դելեգատ (լիազոր) որը կատարում է գործկոմի բոլոր ֆունկցիաները։

§ 73. Միության մեջ մտնող ձեռնարկությունները, որոնք իրարից մոտ են գտնվում, կարողեն կազմել միացիալ կոմիտե, Միության վարչության թույլտվությամբ։

2. Ֆաբրիկա-գործարանային կոմիտեյի իրավունքները և պարտականությունները.

§ 74. Ֆաբրիկա-գործարանային կոմիտեյի՝ որպես միության բջիջի, նպատակն է Միութենական դիրեկտիվների և կանոնագրության նաև ընդհանուր և դելեգատների ժողովների տնորինության հիման վրա, վարել միության վերաբերյալ բոյոր աշխատանքները։

Նկատողություն.—Յեթե ընդհանուր ժողովների

վճիռները հակասում են միութենական դերագույն որգանների տնորինություններին, գործկոմները ձեռնպահ են լինում իրագործելու սրանց, մինչև վոր հարցը կը քննվի Միության վարչության մեջ։

§ 75. Ֆաբրիկա-գործարանային կոմիտեն պարտավորվում է—

ա. միության անդամության գրավել ձեռնարկության բանվորներին և ծառայողներին, բացատրելով նրանց միության նպատակները, որպես բանվորների շահերը պաշտպանող որգանի.

բ. զարգացնել Միության անդամների հեղափոխական դասակարգային գիտակցությունն և բարձրացնել կուլտուրական մակերևույթը, կազմակերպելով լեկցիաներ, ակումբներ, գրադարաններ, ուսումնարաններ և այլն.

գ. կոլլեկտիվ պայմանագիր կազմելու համար նյութեր պատրաստել, մասնակցել պայմանագիր կապելուն և հսկել նրա իրագործմանը.

դ. մասնակցել իր ներկայացուցչի միջոցով կոնֆլիկտա-գնահատման հանձնաժողովում և ուրիշ պարիտետա- հաշտարարական որգաններում։

ե. հսկել որպեսզի աղմինիստրացիան կատարի աշխատանքին վերաբերյալ բոլոր որենքներն աշխատանքի հովանավորության և սոցիալական ապահովության բոլոր նորմաները, նաև ապահովության վճարների ժամանակին տալուն։

զ. հոգալ բանվորների և ծառայողների կենցաղի և աշխատանքի պայմանների բարելավացման համար։

ը. հսկել բանվորներին և ծառայողներին վարձե-

լու և արձակելու պայմանների իրագործմանը, բանվորական ուժի հաշվի և բաժանման կանոնադրության և կոլեկտիվ պայմանագրի հիման վրա։ Վարձելու և արձակելու պայմանները խախտելու դեպքում կոնֆլիկտը հանձնվում է կոնֆլիկտա-գնահատման հանձնաժողովի վճռին։

Թ. հետևել վորպեսզի բանվորներին և ծառայողներին ռաֆիկը ժամանակին վճարեն.

Ժ. մասնակցել բանվորների համար բնակարանային պայմաններ ստեղծելու գործին։

Ի. հավաքել անդամավճարներ և հսկել վորպեսզի ժամանակին մտցնեն միությունը ըստ վորոշված կարգի։

Լ. բանվորների և ծառայողների անունից ներկայացուցիչ հանդիսանալ պետական և խորհրդային որգաններում և ադմինիստրացիայի առաջ ձեռնարկության կեանքի բոլոր հարցերում։

§ 76. Արտադրության կազմակերպման հարցում Ֆ.գ. կոմիտեն վոչ մի ադմինիստրատիվ-տնտեսական ֆունկցիա չի վերցնում իր վրա, հսկելով միայն արտադրության ընթացքին և նկատելով նրա թերությունները, և տեղեկացնում է այդ մասին միութենական բարձրագույն որգանները։ Պետական ձեռնարկությունների գործարանի վարչությունը ղեկուցագրերի միջոցով ծանոթանում է անձամբ և ծանոթացնում է բանվորներին արտադրական հարցերի հետ և նրա ընթացքի և դրության հետ։

§ 77. Ֆարկոմը իր աշխատանքը կատարելուն պատասխանատու է իր ընտրողների առաջ, նաև բարձր միութենական որգանների առաջ. այս վերջիններին նա պարտավոր է բերանացի և գրավոր հաշիվ տալ ղեկուցումներ և արձանագրություններ ուղարկելով։

3. ՖԱԲԳՈՐԾԿՈՄ-ԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

§ 78. Ֆաբգործկոմները, խումբկոմները և այլն ստորին միութենական որգաններն ընտրվում են ձեռնարկությունների բանվորների ընդհանուր ժողովներին, 6 ամիս ժամանակով։ Գլավառական կամ նահանգական բաժինների վարչությունները, հարկ յեղած դեպքում, կարող են ժխտել միութենական ստորին որգանների (ֆաբգործկոմ, խումբկոմ և այլն) անդամների ընտրությունը։

Նկատողություն. Գործկոմը, ամբողջապես կամ մասամբ, կարող է վերընտրվել ժամանակից առաջ ընտրողների կեսի պահանջով կամ միության վարչության տնորինությամբ։

§ 79. Գործկոմի ընտրությունը վավերական է համարվում այն դեպքում, յեթե. ա) ընտրության մասնակցել են վոչ պակաս քան ընտրողների կեսը. բ) յեթե ժողովի մասին ժամանակին տեղեկություն կար տրված նահանգական բաժնի վարչության։

§ 80. Ավելի խոշոր ձեռնարկությունների մեջ, վորտեղ տեխնիքական դժվարություններ կան ընդհանուր ժողով հրավիրելու, ֆաբգործկոմն ընտրվում է ցեխային կամ բաժանմունքների դելեգատ ներկայացուցիչների ժողովում։

Նկատողություն. Ամեն մի բաժանմունքի դելեգատների թիվը վորոշվում է բաժանմունքի բանվորների թվի հավասար հարաբերությամբ։

§ 81. Ֆաբգործկոմի ընտրության մասնակցում են

ձեռնարկության բոլոր բանվորներն և ծառայողները, որոնք Միության անդամ են և որոնք իրավունք ունեն Միության անդամ մտնելու։ Ընտրվել կարող են միմիայն Միության անդամները։

Նկատողություն.—ներկա ձեռնարկության մեջ ադմինիստրատիվ դիրք ունեցող անձինք չեն կարող ֆաբգործկոմի անդամ ընտրվել

§82. ՖԳԿ-ի թվական կազմը վորոշվում է ձեռնարկության կամ հիմնարկության բանվորների կամ ծառայողների թվով հետևյալ նորմայով։—

50-ից 100—3 մարդ
100-ից 1000—5 »
1000-ից վեր—7 »

§83. Ֆաբգործկոմի անդամները ֆաբկոմում մշտապես աշխատելու համար ազատվում են հետևյալ նորմայով. 50-300 մարդուց ազատվում է մի մարդ. 300-1000—2 մարդ. 1000-ից վեր 3 մարդ։ Կոնֆլիկտագնահատման հանձնաժողովում ֆաբգործկոմի ներկայացուցիչները ազատվում են անկախ վերոհիշյալ նորմայից. Միության վարչության սանկցիայով, բացի ընտրովի անձանցից, ֆաբգործկոմը կարող է ունենալ տեխնիքական աշխատակիցներ։

Մանր ձեռնարկությունների մեջ դելեգատները միությենական պարտավորություններ կատարելու համար ազատվում են իրենց հիմնական աշխատանքից շաբաթական վորոշ թվով ժամեր, վորի նորման վորոշում է կենդր. կոմ.-ի հատուկ որենորինությամբ։

§ 84. Ձեռնարկությունների մեջ աշխատանքից ազատված ֆաբկոմի անդամները վարձատրվում են միու-

թենական որգանների մշակած ստավկայով.

§ 85. Ֆաբգործկոմը իր ծախսերը ստանում է ձեռնարկությունից գոյություն ունեցող որենսդրության հիման վրա և նորմաներով և ծախսում է Միության վարչության հաստատած նորմայով։

4. Ընդհանուր ժողովներ.

§ 86. Վոչ սակավ քան ամիսը մի անգամ, գործից ազատ ժամին, ՖԳԿ հրավիրում է ձեռնարկության բանվորների և ծառայողների ընդհանուր ժողով։ Բանվորների և ծառայողների 1/3 մասի կամ Միության վարչության պահանջով հրավիրվում է արտակարգ ժողով։

§ 87. ՖԳԿ-ն ընդհանուր ժողովներին. ա) զեկուցում է իր գործունեության մասին. բ) առաջարկում է քննել ձեռնարկության մեջ դանվող միության անդամների կենցաղին և դրության վերաբերյալ հարցերը, համամիությենական կեանքի հարցերը, համագումարների և կոնֆերենցիաների մասին զեկուցումներն և այլն։

§ 88. Ընդհանուր ժողովի անորինությունները պարտադիր են ձեռնարկության բոլոր բանվորների և ծառայողների համար, Միության թե անդամ և թե վոչ անդամների համար, բայց կարող են բողոքի յենթարկել Միության վարչության առաջ։

§ 89. ՖԳԿ գործնական աշխատանք կատարելու համար ընտրում է իր միջից նախագահ և քարտուղար։

§ 90. Խոշոր ձեռնարկություններում, ուր հաճախ հնարավոր չէ ընդհանուր ժողովներ կազմել, կարելի է դելեգատների ժողով գումարել։ Դելեգատների ժողովները գումարվում են Միության վարչության հաստա-

տած նորմաներով և կարգով։

§ 91. Ձեռնարկությունների մեջ, հարկ յեղած դեպքում, կազմվում են հանձնաժողովներ աշխատանքի հովանավորման, կուլտուրա-լուսավորական աշխատանքի համար և այլն։

VI ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.

§ 92. Միության յեկամուտները կազմում են—

ա. ներածական վճարներ,

բ. ամսական անդամավճարներ,

գ. միանվագ բաժնեմասեր,

դ. տպագրական որդաններ հրատարակելուց ստացվող և ուրիշ յեկամուտներ։

§ 93. Ներածական և անդամավճարները ստանում են ֆաբգործկոմները (դելեգատները) միութենական որդանների հաստատած կարգով և կանոնավոր կերպով մտցնում են՝—նահանգական բաժնում—այն ձեռնարկությունները, որոնք գտնվում են նահանգական քաղաքում և նահանգական քաղաքի գավառներում. գավառական բաժնում—այն ձեռնարկությունները, որոնք գտնվում են ներկա գավառում։

Գավառական բաժինները բոլոր ստացվող ներածական և անդամավճարների որոշ տոկոսն ուղարկում յեն իրենց նահանգական բաժնին, իսկ մնացորդը ծախսում են իր ապպարատի և ուրիշ կազմակերպչական կարիքների համար, նաև մաս են հանում ֆոնդերին։ Յուրաքանչյուր գավառական բաժնի վճարի չափը որոշում է նահանգական բաժինը։

Նահանգական համագումարն իրավունք ունի միատեսակ սմետա հաստատելու բոլոր նահանգական

բաժինների համար։ Այդ վճիռը պետք է հաստատի Կենդր. Կոմիտեն. նահանգական սմետան հաստատվելուց բոլոր անդամավճարները գավառական բաժիններից մտնում են նահանգական բաժին։ Գավառական բաժինները ստանում են իրենց միջոցները հաստատված սմետայի համաձայն։

§ 94. Ներածական վճարը որոշվում է ամեն տեսակ որավարձի կիսի չափով։

§ 95. Ամսական անդամավճարները կազմում են ամեն տեսակ իրական աշխատավարձի 2 տոկոսը։

§ 96. Հատուկ վճարներ—ինչպես որինակ միանվագ վճարներ մասնավոր ֆոնդերի համար—միության անդամները կատարում են հոժարական, ձեռնարկության ընդհանուր ժողովի վորոշումով և կամ Համամիութենական համագումարի տնորինությամբ, վոր հաստատում է Համառուսական ՊՄԿԽ.

§ 97. Նահանգական բաժինները միության անդամներից ստացված անդամավճարների և ներածական վճարների ընդհանուր գումարից մաս է հանում նահանգական պրոֆխորհրդին, գերագույն որդաններից հաստատված նորմայով և 5 մինչև 25% կենդր. Կոմիտեյին։ Մնացորդը ծախսվում է Միության ապպարատի և ուրիշ կարիքների համար նահանգական ծավալով, և մաս է հանվում ֆոնդերի համար միութենական որդանների հաստատած նորմայով և կարգով։ Կենդր. Կոմիտեյի հասանելիք մասը վճարվում է յուրաքանչյուր ամիս։ Կենդրոն. Կոմիտեն խմբերի և բաժանում նահանգական բաժինները ավելի ճիշտ վորոշելու համար յուրաքանչյուրի վճարելիք տոկոսը Կ. Կոմիտեյին։

§ 98. Կենդր. Կոմիտեն նահանգա-բաժիններից ստա-

ցած տոկոսների ընդհանուր գումարից վորոշ տոկոս տալիս է Համառուսական ՊՄԿԽ-ին և միջազգային համախմբման, նաև հատուկ ֆոնդերին, իսկ մնացորդը ծախսում է Կ. Կոմ-ի կարիքների և միության սպասավորման համար։

§ 99. Շրջանային բյուրոներն և Կ. Կ-ի լիազորները գոյություն ունին Կ. Կ-ի սմետայի և միջոցների շնորհիվ։

§ 100. Բայֆաբկոմները, վորոնք գոյություն ունեն գավառաբաժինների իրավունքներով, բոլոր յեկամուտներն ուղարկում են նահանգական բաժնին։ Նայած բայֆաբկոմների նյութական դրության, նահանգաբաժինները կարող են յեկամուտի մի մասը թողնել բայֆաբկոմին, կազմակերպչական ծախսերի համար։

§ 101. Իրենց ֆինանսական պարտավորություններն յերեք ամիս անընդհատ, առանց հարգելի պատճառների, չկատարող գավառ և նահանգաբաժինների դեմ կարելի է հարկադրիչ միջոցներ ձեռք առնել և նույնիսկ լուծել վարչության կազմը և զրկել ԽՍՀՄ սննդի և համի արդյունաբերության բանվորների միության շարքերի անդամությունից։

VII ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ։

§ 102. Միութենական բոլոր որգանները, սկսած ֆաբգործկոմից մինչև Կ. կոմիտեն, պարտավոր են հաշիվ տալու համապատասխան ընդհանուր ժողովներին։ Բացի համագումարներին և ժողովներին ներկայացրած հաշիվներից, միութենական ստորին որգանները պարտավոր են հաշիվ ներկայացնել միութենական գերա-

գույն որգաններին վերջիններիս վորոշած կարգով։ Միութենական բոլոր որգանները պարտավոր են վորոշ միջոցներին, կանոնավոր կերպով, ներկայացնել միութենական գերագույն որգաններին միութենական աշխատանքի դրությունը բնորոշող տեղեկատու ստատիստիկական զեկուցումները։

§ 103. Միութենական ստորին որգանների բոլոր արձանագրությունները, շրջանագրերն և տնորինությունները իր ժամանակին պետք է ներկայացնել միութենական բարձր որգաններին։

§ 104. Այն կազմակերպությունների դեմ, վորոնք չեն կատարում իրենց հաշվետվական պարտավորությունները միութենական բարձր որգանների առաջ, նույն հարկադրիչ միջոցներ են ձեռք առնվում ինչ վոր ֆինանսական պարտավորություններ չը կատարողների դեմ (§ 101)։

VIII ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՏՈՒԳՈՒՄՆ

§ 105. Միութենական բոլոր որգանների ֆինանսական, վարչական և տնտեսական գործունեությունը ստուգելու համար, համագումարներին և ընդհանուր ժողովներին ընտրվում է վերաքննիչ հանձնաժողով— 1) Կենդր. Կոմ-ի 5 անդամից և 2 կանդիդատից. 2) նահանգ. և գավառաբաժնի և ֆաբգործկոմի 3 անդամից։ Վերաքննիչ հանձնաժողովը ընտրվում է նույն ժամանակամիջոցով, ինչպես և ներկա միութենական որգանը։

§ 106. Վերաքննիչ հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել այն անձինք, վորոնք վորևե պաշտոն ու-

նեն ընտրությամբ կամ միութենական որգաններրի վարձով և յենթակա յեն նրանց վերաքննության։

§ 107. Միութենական բարձր որգաններն իրավունք ունեն վերաքննելու Միության ստորին որգանները։

§ 108. Վերաքննիչ հանձնաժողովները զեկուցանում են համագումարներին և կոնֆերենցիաներին յենթակա կազմակերպությունների գործունեության մասին։

§ 109. Վերաքննիչ հանձնաժողովը իրավունք ունի վերաքննելու, յերբ նա կարևոր կըհամարի, բայց վոչ պակաս, քան 4 ամիսը մի անգամ։ Վերաքննությունը կարելի յե կատարել Միության անդամների 1/10 պահանջով, նաև այն կազմակերպության պահանջով, վորը յենթարկվում է վերաքննության։

§ 110. Համապատասխան միութենական որգաններրի ժողովներին վերաքննիչ հանձնաժողովի անդամները խորհրդակցական ձայն ունեն։

Типография Госиздата ССР Армении Армянский пер., 2.

Главлит № 32040 Тираж 2500.

ՀՀ Ազգային գրադարան
NL0196912

Հրատարակություն
ՍՆՆԴԻ և ՀԱՄԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ
Կ. ԿՈՄԻՏԵՅԻ